Արձանագրություն 02

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

26 օգոստոսի, 2024թ., ժ 16:00, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1, Գյումրու համայնքապետարան

ք. Գյումրի

Մասնակցում էին՝

1) Մենուա Մկրտչյան – համայնքի ղեկավարի խորհրդական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Լևոն Բարսեղյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի պաշտոնակատար,

3) Շուռիկ Հակոբյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժնի պետ,

4) Խաչատուր Սուլթանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ

5) Հրաչ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ.

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման գնումների միջոցով առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 30.08.2024թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի հրավերի տեքստերը միաժամանակ հրապարակվել է www.gnumner.am և www.armeps.am ինտերնետային կայքերում:

1.2 Գյումրի համայնքի կարիքների համար Ավտոմեքենաների ապահովագրության ծառայությունների ձեռքբերման համար «**ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-19/24**» ծածկագրով գնանշման հարցման գնումների համաձայն գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	Անվանումը	Հասցե
1.	«Ռեգո Ինշուրանս» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 62$_2$, տարածք 93-93/1

1.3 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակցի կողմից ներկայացրած հայտը կազմվել և ուղարկվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող հավելվածները:

1.6. Մասնակիցների առաջարկած գները

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	«Ռեգո Ինշուրանս» ՓԲԸ		Նախահաշվային գին
		առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Ընդհանուր գին
1.	Միկրոավտոբուսների ապահովագրության ծառայություն	8 448 000	8 448 000	8 250 000

- Հանձնաժողովը արձանագրեց, որ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-19/24» ծածկագրով գնանշման հարցման մասնակցության հայտ է ներկայացրել միայն «Ռեգո Ինշուրանս» ՓԲԸ-ն:
- «Ռեգո Ինշուրանս» ՓԲԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է պատվիրատուի մոտ առկա նախահաշվային գինը:
- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման 40-րդ կետի 6-րդ մասի համաձայն, այն է՝ «եթե հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների գները գերազանցում են գնման գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում»:

Հանձնաժողովը որոշեց՝

- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման 40-րդ կետի 6-րդ մասը և «Ռեգո Ինշուրանս» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի կողմից Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված 2024 թվականի սեպտեմբերի 4-ի N 3000-1194 գրությունը, հանձնաժողովը որոշեց ընդունել «Ռեգո Ինշուրանս» ՓԲԸ-ի ներկայացրած գնային առաջարկը՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:
- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենիք 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:
- Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին կուղարկվի պայմանագրի նախագիծը, ինչն անհրաժեշտ է 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել և ներկայացնել պատվիրատուին: Անհրաժեշտ է նաև ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները՝ միակողմանի հաստատված տուժանքի ձևով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ Մենուա Մկրտչյան _____

Հանձնաժողովի անդամներ՝ Լևոն Բարսեղյան _____

Խաչատուր Սուլթանյան _____

Շուռիկ Հակոբյան _____

Հրաչ Վարդանյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ Արմինե Սարգսյան _____